

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՅԾ)՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՌԴ Ճյուղային սննդի ինստիտուտի (SIFI), «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի հետ համատեղ, հայտարարում են Հայաստանի դպրոցների համար նախատեսված 2022թ. երկրորդ ամենամյա «Լավագույն դպրոցական մինի այգի» մրցույթի մեկնարկի մասին:

«Դպրոցական սնունդ» ծրագրի մաս հանդիսացող այս մրցույթի նպատակն ազգային մակարդակում դպրոցական այգիների ստեղծման խթանումն է: Այն ոչ միայն կօգնի բազմազանեցնել դպրոցական ստանդարտ ճաշացանկը բնական թարմ բանջարեղենի ու կանաչիների օգնությամբ, այլև վաղ տարիքից երեխաների շրջանում հետաքրքրություն կառաջացնի օրգանական հողագործության նկատմամբ՝ ծանոթացնելով հողօգտագործման հիմունքներին:

Մրցույթի հաղթողը կստանա դրամաշնորհ 3000 ԱՄՆ դոլարի չափով՝ իր դպրոցի այգին զարգացնելու և կատարելագործելու համար:

Մրցույթը կիրականացվի երկու փուլով:

Փուլ 1. Դպրոցները պետք է ներկայացնեն գրանցման հայտ:
Գրանցման վերջնաժամկետ՝ 2022թ. մայիսի 18:

Փուլ 2. Դպրոցները պետք է ներկայացնեն ծրագրի փաթեթը:
Ծրագրի փաթեթների ներկայացման վերջնաժամկետ՝ 2022թ. սեպտեմբերի 15:

Ընտրող հանձնաժողովը կգնահատի ստացված նախագծերի փաթեթները և կհայտարարի հաղթողներին մինչև 2022թ. նոյեմբերի 1-ը:

Մրցույթի, կանոնների և հայտերի ներկայացման պահանջների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ <https://clck.ru/eyLSB>

Մրցույթի կազմակերպման վերաբերյալ բոլոր հարցերը կարող եք ուղղել հետևյալ էլ. փոստի հասցեին՝ minigarden.armenia@gmail.com:

Մրցույթին կարող եք հետևել նաև հատուկ ֆեյսբուքյան էջում, որպեսզի բաց չթողնեք վերջին նորությունները: Մրցույթի ֆեյսբուքյան էջին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://clck.ru/dnj3B>:

Մրցույթը թեման է՝ «Օրգանական դպրոցական այգի. առողջության և բարեկեցության աղբյուր»: Օրգանական հողագործությունը գյուղատնտեսական գործունեության տեսակ է, որ տարեցտարի ավելի ու ավելի լայն տարածում է գտնում ամբողջ աշխարհում:

Այս մոտեցումն ուղղված է մեր մոլորակի բնապահպանական իրավիճակի բարելավմանը՝ հողի և դրա բնակիչների մասին հոգ տանելու, հողի մշակման մեղմ մեթոդների կիրառման, մշակաբույսերի բնական բազմազանության պահպանման և թունավոր նյութերի, թունաքիմիկատների, քիմիական պարարտանյութերի օգտագործումից ամբողջությամբ հրաժարվելու միջոցով: Իր հերթին, դա թույլ է տալիս պահպանել հողի բերրիությունը և օրգանապես մաքուր, ավելի բարձր սննդային արժեք ունեցող մթերք ստանալ: Օրգանապես աճեցված բանջարեղենը, մրգերն ու կանաչիները հատկապես օգտակար են երեխաների առողջության համար:

Դպրոցական միևնույն այգիների առաջին մրցույթն անցկացվել է 2021թ.-ին: Մասնակիցների՝ դպրոցականների, ուսուցիչների, ծնողների, գյուղատնտեսական ոլորտի մասնագետների դրական արձագանքը վկայում էր ծրագրի նկատմամբ մեծ հետաքրքրության և այն զարգացնելու և օժանդակելու պատրաստակամության մասին: Ուստի կազմակերպիչները որոշեցին մրցույթն ամենամյա ավանդույթ դարձնել: